



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 04/22**

30.03.2022թ.

ք. Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, նախագահությամբ դատավոր Լ. Գրիգորյանի (այսուհետ՝ Դիմող) թիվ ԵԴ/17521/02/21 քաղաքացիական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 1419-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է ՀՀ Կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 1419-Ն որոշման համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին:

Ըստ Դիմողի, ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվել է, որ ՀԴՄ տեխնիկական սպասարկումը կազմակերպում է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Գրասենյակը), իսկ Գրասենյակն էլ իր հերթին այդ ծառայությունների իրականացումը կարող է կազմակերպել անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց միջոցով: Ընդհանրացնելով ստացվում է, որ տնտեսական գործունեության մի ոլորտը, որը վերաբերում է հարկ վճարողների կողմից օրենքի համաձայն օգտագործվող հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկմանը, կառավարության որոշմամբ մենաշնորհային կարգով տրված է Գրասենյակին, որին էլ կառավարության որոշումը լիազորել է այդ գործառնությունների իրականացումը կազմակերպել մասնավոր անձանց միջոցով, սակայն այդ կազմակերպման համար կառավարության որոշմամբ սահմանվել են սահմանափակումներ: ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված է միայն ՀԴՄ-ներին առաջադրվող տեխնիկական պահանջների, գրանցման և գրանցումից հանման կարգի, կիրառության կանոնների հաստատման լիազորություն, որն էլ իրացվել է մեկ այլ՝ 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1976-Ն որոշմամբ և չի առնչվում դիմումում քննարկվող հարաբերություններին: Այսինքն՝ ՀՀ կառավարությունը օրենքով չունի լիազորություն՝ սահմանելու ՀԴՄ-ների սպասարկման մենաշնորհային կարգ, դրա համար վճարվող սակագներ և այլն:

Դիմողը նշում է նաև, որ սպասարկողների կողմից միջնորդավճարի վճարման պարտականության նախատեսումը հակասում է Սահմանադրությամբ երաշխավորված

տնտեսական գործունեության հիմնական ազատությանը: Ընդ որում, համաձայն ՀՀ կառավարության թիվ 1419-Ն որոշման՝ սահմանամերձ գյուղերում հաշվառված և սահմանամերձ գյուղերում փաստացի գործունեություն իրականացնող հարկ վճարողների համար սահմանամերձ գյուղերում տեղադրված հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկումն իրականացվում է անվճար: Այսինքն՝ Կառավարությունը, սահմանելով հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկման չափանիշները, ՊՈԱԿ-ին լիազորել է այդ գործունեությունն իրականացնել մասնավոր անձանց միջոցով, ովքեր գործելու են ձեռնարկատիրական հիմունքներով՝ միննույն ժամանակ սահմանելով սպասարկման իրականացման իմպերատիվ պահանջներ, ինչպես օրինակ՝ սպասարկումն անվճար իրականացնելու դեպքերը: Այսինքն՝ տվյալ պարագայում ոչ միայն անհարկի սահմանափակման է ենթարկվում անձի տնտեսական գործունեության ազատությունը, այլև վերջինս զրկվում է ձեռնարկատիրական գործունեության իրականացման արդյունքում ակնկալվող «ողջամիտ» շահույթի ստացումից: Ասվածը հիմնավորելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նաև տեխնիկական սպասարկումն իրականացնելու դեպքում համապատասխան պահանջներին բավարարող մասնագետներ և սարքավորումներ ունենալու անհրաժեշտությունը, ինչը ևս տնտեսական գործունեության սուբյեկտից պահանջում է իրականացնել որոշակի ծախսեր: Բացի դրանից, տեխնիկական սպասարկում իրականացնող անձը նշված ծախսերի կատարման փուլում պետությունից՝ որպես այդ գործառույթը պատվիրակած մարմնից, նյութական որևէ աջակցություն չի ստանում, իսկ սպասարկման միջինացված գները առկա շուկայական պայմաններում բավականին ցածր են:

Ի հակադրություն ՌԴ-ում գործող կարգի՝ Դիմողը նշում է, որ ՀՀ-ում ոչ միայն օրենքի խախտմամբ միջամտություն է իրականացվում անձի տնտեսական գործունեության նկատմամբ, այլև խախտվում է ողջամիտ հավասարակշռությունը կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև: Ավելին, սպասարկողներին որևէ ծառայություն չմատուցելու պայմաններում Գրասենյակի կողմից գանձվում է վերջիններիս գործունեությանը և առկա շուկայական պայմաններին միանգամայն ոչ համարժեք՝ 8% շրջանառության միջնորդավճար, ինչը տնտեսական գործունեության ազատության ևս մեկ խախտում է:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է ՀՀ Կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 1419-Ն որոշման համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին:

Վիճարկվող իրավական ակտը՝ ՀՀ Կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 1419-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում)

վերաբերում է հիմնադրման միջոցով «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» (այսուհետ՝ Գրասենյակ) պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելուն: Համաձայն նշված որոշման Գրասենյակին է վերապահվել ՀՀ-ում շահագործվող հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման կազմակերպումը՝ Որոշման հավելվածով սահմանված ընթացակարգով:

Սահմանադրության 59-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

2. Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով՝ հանրային շահերի պաշտպանության նպատակով:

3. Շուկայում մենաշնորհ կամ գերիշխող դիրքի չարաշահումը, անբարեխիղճ մրցակցությունը և հակամրցակցային համաձայնություններն արգելվում են:

Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով:

8. Յուրաքանչյուր ոք պարտավոր է մուծել օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր, կատարել պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ:

Այսպես, քանի որ վերը նշված իրավական ակտը վիճարկվում է Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածների տեսանկյունից, նախ անհրաժեշտ է վիճարկվող դրույթների սահմանադրականությունը դիտարկել ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և սեփականության իրավունքների վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումների տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի նոյեմբերի 25-ի ՄԴՈ-780 որոշման մեջ, անդրադառնալով ձեռնարկատիրական գործունեության իրավունքին, փաստել է. «7. Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ գործի շրջանակներում էական է, նախ՝ «ձեռնարկատիրական գործունեություն» հասկացության սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը: ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք»: Այս ձևակերպումից հետևում է, որ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելն անձի սահմանադրական իրավունքն է, և որ այդ գործունեության բովանդակությունը (հատկանիշները), իրականացման կարգն ու պայմանները ենթակա են օրենսդրական կարգավորման: Միաժամանակ, ՀՀ Սահմանադրության 8 հոդվածի համաձայն երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունը, սակայն այդպիսի գործունեության հասկացության նորմատիվ-իրավական բնորոշումը (հատկանիշները) ընթացիկ օրենսդրությամբ լիարժեք չի հստակեցված: Տնտեսական գործունեություն է համարվում ցանկացած գործունեություն, որն իրականացվում է որևէ ձևով կատարվող հատուցման դիմաց («Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մաս): Ձեռնարկատիրական գործունեության, որպես տնտեսական առանձին գործունեության, բովանդակության իրավական բնորոշումից բխում է, որ այն անձի՝ ինքնուրույն, իր ռիսկով իրականացվող գործունեությունն է, որի հիմնական նպատակը գույքի օգտագործումից, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ ստանալն է (ՀՀ քաղ. օրենսգրքի 2-րդ հոդված):

8. ՀՀ Սահմանադրության 33.1. հոդվածն ամրագրում է յուրաքանչյուրի՝ օրենքով չարգելված ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Այդ իրավունքը ներառում է բոլոր իրավական հնարավորությունները, որոնք անհատի համար նախապայմաններ են ստեղծում ինքնուրույնաբար որոշումներ ընդունելու իր տնտեսական գործունեությանն առնչվող հարցերով: Այդ իրավունքը ենթադրում է արդարացի մրցակցության ազատություն, առանց սահմանափակումների տնտեսական կազմակերպություններ ձևավորելու, իր գործունեության բնույթն ու ձևը փոխելու, գոյություն ունեցող տնտեսական կազմակերպությունները լուծարելու, պայմանագրեր կնքելու հնարավորություններ: Ձեռնարկատիրական գործունեության իրավունքի անբաժանելի բաղադրատարրն է կազմում նաև ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու ցանկություն ունեցող անձի՝ առանց արհեստական խոչընդոտների շուկա մտնելու և, ցանկության դեպքում, այդ շուկայից դուրս գալու հնարավորությունը:»

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքը (տե՛ս, օրինակ, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44): ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածն ամրագրում է, որ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը, իսկ 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի

օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2009 թվականի հուլիսի 14-ի ՄԴՈ-815 որոշման մեջ Սահմանադրական դատարանը սեփականության իրավունքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը. 07. Սեփականության իրավունքի հետ կապված սահմանադրաիրավական հարաբերությունների կարգավորման սկզբունքային նորմերը նախատեսված են ՀՀ Սահմանադրության 8 և 31 հոդվածներում, համաձայն որոնց՝ Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը (իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու՝ սեփականատիրոջ իրավունքը), որից անձը կարող է զրկվել բացառապես դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերում, իսկ սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:»:

2012 թվականի փետրվարի 24-ի ՄԴՈ-1009 որոշման մեջ Սահմանադրական դատարանն հայտնել է հետևյալ դիրքորոշումը. 05. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասի առաջին նախադասությամբ սեփականության իրավունքը ճանաչելով որպես յուրաքանչյուրի հիմնական իրավունք, բացահայտվում է այդ իրավունքի բովանդակությունը, այն է՝ իր սեփականությունը տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իրավագործությունները՝ միաժամանակ որպես դրանց իրացման նախապայման սահմանելով սեփականատիրոջ հայեցողությունը: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրացման պարտադիր նախապայման, և սեփականության իրացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույքային իրավունքների իրացումը պետք է իրականացվի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՄԴՈ-630 որոշման մեջ անդրադառնալով սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակումներին՝ մասնավորապես նշել է. «Սահմանադրության 43 հոդվածը սեփականության իրավունքը չի դիտարկում որպես այդ հոդվածի հիմքերով սահմանափակվող իրավունք: Առկա է իրավունքների սահմանափակման այն առանձնահատուկ դեպքը, երբ Սահմանադրությունն է որոշում տվյալ իրավունքի սահմանափակման չափանիշն ու սահմանները՝ դա չվերապահելով նույնիսկ օրենսդրի իրավասությանը: Այն կարող է, նախ՝ իրականացվել օրենքով նախատեսված դեպքերում բացառապես դատական կարգով սեփականությունից զրկելու միջոցով՝ որպես պատասխանատվությունից բխող

հարկադիր գործողություն: Երկրորդ՝ «սեփականության օտարման» միջոցով, որը «սեփականության զրկումից» էապես տարբեր այլ ինստիտուտ է և պետք է իրականացվի Սահմանադրության 31 հոդվածի 3-րդ մասի հիմքերով»: Սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակման նշված երկու դեպքերի համար բնորոշ ընդհանրական տարրն այն է, որ երկու դեպքում էլ սեփականատիրոջ հայեցողությունը, կամքն այլևս առաջնային և վճռորոշ չեն, քանի որ այս դեպքերում առաջնայնությունն են ստանում տվյալ իրավիճակում պաշտպանության նախապատվություն ունեցող այլ շահեր: Այսպիսով, ՀՀ Սահմանադրությունը թույլատրում է բացառապես երկու դեպք, այն է՝ 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերը, երբ սեփականատիրոջ կամքն առաջնային չէ, և սեփականության իրավունքի իրացումը չի բխում սեփականատիրոջ հայեցողությունից: Հետևաբար, ցանկացած այլ դեպքում սեփականության իրավունքի իրացման գործընթացում միջամտությունը սեփականատիրոջ հայեցողությանը, սեփականատիրոջ գույքի տնօրինումն առանց այդ հայեցողության հստակ արտահայտման և դրսևորման չի կարող համարվել իրավաչափ և կհանդիսանա սեփականության իրավունքի խախտում:»:

Այսպես, Որոշմամբ Կառավարությունը ստեղծել է Գրասենյակ, որը կազմակերպելու է ՀՀ-ում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկումը: Նշված որոշման հավելվածի 2-րդ կետի հաաձայն՝ Գրասենյակը Հայաստանի Հանրապետությունում հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկումը կազմակերպում է իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ պայմանագրի կնքման միջոցով և, պայմանագրով նախատեսված լինելու դեպքում, իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից յուրաքանչյուր ամիս կարող է գանձել միջնորդավճար՝ Գրասենյակի խորհրդի կողմից հաստատված չափով: Ընդ որում, պայմանագրով միջնորդավճար նախատեսված լինելու դեպքում միջնորդավճարը գանձվում է հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկում իրականացնող բոլոր իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից՝ միևնույն չափով:

Սույն դիմումի հիմք հանդիսացած քաղաքացիական գործի շրջանակներում ներկայացվել է «Տոչ-Մաստեր» ՍՊ ընկերության և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» ՊՈԱԿ-ի միջև 01.08.2018թ. կնքված թիվ 7 պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր), որով տվյալ ընկերությունը հնարավորություն է ստացել իրականացնել հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման գործունեություն:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Կատարողը յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենաների տեխնիկական սպասարկման համար գանձված գումարից Գրասենյակին է վճարում միջնորդավճար:

Պայմանագրի 3.1. կետի համաձայն՝ սույն պայմանագրով Ընկերությունը յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայի տեխնիկական սպասարկման համար վճարված գումարից 8%-ը (ներառյալ ԱԱՀ) վճարում է Գրասենյակին որպես միջնորդավճար:

Որոշման և Պայմանագրի վերլուծությունից պարզ է դառնում, որ Գրասենյակն անձամբ չի իրականացնում հսկիչ-դրամարկղային մեքենայի տեխնիկական սպասարկումը, այլ դա իրականացնում է միջնորդավորված՝ այլ ընկերությունների միջոցով, պայմանագրի հիման վրա, որի համար տվյալ ընկերությունները Գրասենյակին վճարում են միջնորդավճար՝ հսկիչ-դրամարկղային մեքենայի տեխնիկական սպասարկման համար վճարված գումարի 8%-ը (ներառյալ ԱԱՀ):

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին:

ՀՀ Սահմանադրության 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը:

ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատում է Կառավարությունը:*

Վերոգրյալ նորմերի վերլուծությունից պարզ է դառնում, որ վիճարկվող իրավական ակտով Կառավարությունը կարգավորումներ է սահմանել մի շարք իրավահարաբերությունների համար, որոնց համար լիազորված չի եղել օրենքով: Դիմողն իրավացիորեն նկատել է, որ Որոշմամբ սահմանվել է, որ ՀԴՄ տեխնիկական սպասարկումը կազմակերպում է Գրասենյակը, իսկ Գրասենյակն էլ իր հերթին այդ ծառայությունների իրականացումը կարող է կազմակերպել անհատ ձեռնարկատերերի կամ իրավաբանական անձանց միջոցով: Ընդհանրացնելով ստացվում է, որ տնտեսական գործունեության մի ոլորտը, որը վերաբերում է հարկ վճարողների կողմից օրենքի համաձայն օգտագործվող հսկիչ-դրամարկղային մեքենաների սպասարկմանը, կառավարության որոշմամբ մենաշնորհային կարգով տրված է Գրասենյակին, որին էլ կառավարության որոշումը լիազորել է այդ գործառույթների իրականացումը կազմակերպել մասնավոր անձանց միջոցով, սակայն այդ կազմակերպման համար կառավարության որոշմամբ սահմանվել են սահմանափակումներ: ՀՀ հարկային օրենսգրքով նախատեսված է միայն ՀԴՄ-ներին առաջադրվող տեխնիկական պահանջների, գրանցման և գրանցումից հանման կարգի, կիրառության կանոնների հաստատման լիազորություն, որն էլ իրացվել է մեկ այլ՝ 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1976-Ն որոշմամբ և չի առնչվում դիմումում քննարկվող հարաբերություններին: Այսինքն՝ ՀՀ կառավարությունը օրենքով չունի լիազորություն՝ սահմանելու ՀԴՄ-ների սպասարկման մենաշնորհային կարգ, դրա համար վճարվող սակագներ և այլն:

Բացի դա, հաշվի առնելով սույն պարագայում միջնորդավճարի գանձման բովանդակությունը, նպատակը, որևէ հանդիպական գործողությամբ պայմանավորված չլինելը՝ գաձվող միջնորդավճարը ձեռք է բերում պարտադիր վճարի հատկանիշներ, իսկ պարտադիր վճարը պետք է սահմանվի օրենքով՝ Սահմանադրությամբ նախատեսված պահանջներին համապատասխան, ինչը տվյալ դեպքում չի արվել:

Տնտեսական գործունեության ազատության սկզբունքը ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության նախադրյալ է, մարդու ազատության տնտեսական հիմքը: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է իրավաբանորեն երաշխավորված հնարավորություն՝ ազատորեն օգտագործելու սեփական ընդունակություններն ու գույքը օրենքով չարգելված տնտեսական գործունեության համար, այսինքն՝ իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն: Սահմանադրականության զարգացման ժամանակակից միտումները վկայում են, որ տնտեսական հարաբերությունները կարգավորող սահմանադրական հիմնարար սկզբունքներն իրագործելի են միայն երկրում ժողովրդավարական ազատությունների և դրանց հուսալի իրավական պաշտպանվածության պարագայում, ինչպես նաև՝ տնտեսական գործունեության արդյունավետությունն այդ իսկ գործունեության սոցիալական հետևանքների հետ խելամիտ զուգորդելու պայմաններում:

Սակայն, փաստացի, Գրասենյակը որևէ ծառայություն կամ հատուցում չի տրամադրում, ինչպես նաև չի կատարում որևէ աշխատանք, սակայն Կառավարության որոշմամբ սահմանվում է, որ այդ տնտեսական գործունեությունը կարող է իրականացնել միայն Գրասենյակը՝ միջնորդավորված, այլ իրավաբանական անձանց միջոցով, ինչպես նաև Գրասենյակի խորհուրդը կարող է սահմանել միջնորդավճար, որը գանձվում է այդ իրավաբանական անձանցից:

Այլ կերպ ասած՝ ոչ միայն օրենքի խախտմամբ միջամտություն է իրականացվում անձի տնտեսական գործունեությանը, այլև խախտվում է ողջամիտ հավասարակշռությունը կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև: Գրասենյակի կողմից գանձվող միջնորդավճարը սպասարկող կազմակերպությունների գործունեության չհիմնավորված միջամտություն և սահմանափակում, ինչը տնտեսական գործունեության ազատության խախտում է: Ավելին, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող յուրաքանչյուր սպասարկող իրավաբանական անձ ակնկալում է իր կողմից մատուցվող ծառայության արդյունքում շահույթ ստանալ (ինչը հանդիսանում է վերջիններիս սեփականությունը), սակայն Որոշմամբ սահմանված կարգավորումների պարագայում, փաստորեն, վերջինս պարտավոր է յուրաքանչյուր գործարքից 8% միջնորդավճար վճարել Գրասենյակին, որը բացի տվյալ իրավաբանական անձանց գրանցելուց, այլ գործառույթ չի իրականացնում: Նման կարգավորումն իր հերթին հանգեցնում է սեփականության իրավունքի անհիմն և անհամաչափ սահմանափակման: ՀՀ Սահմանադրությունը թույլատրում է սեփականության իրավունքի սահմանափակման բացառապես երկու դեպք, այն է՝ սեփականության իրավունքի սահմանափակումը միայն օրենքով

1. հանրության շահերի կամ

2. այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 78-րդ հոդվածով երաշխավորված համաչափության սկզբունքին, համաձայն որի՝ *հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:*

Սահմանադրական դատարան 2014 թվականի ապրիլի 18-ի ՄԴՈ-1148 որոշման մեջ նշել է. «6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:»:

Անդրադառնալով նաև մարդու իրավունքների սահմանափակման հնարավորությանը, Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՄԴՈ-649 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «... Սահմանադրորեն նախատեսված սահմանափակման ենթակա իրավունքների առնչությամբ, համաձայն մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մարդու իրավունքի սահմանափակումը կարող է իրականացվել միայն օրենքով՝ երաշխավորելով համաչափությունը, չաղավաղելով իրավունքի էությունը (սահմանափակման հետևանքով իրավունքը չզրկվի իր բովանդակությունից, չվտանգվի դրա գոյությունը):»:

Սահմանադրական դատարանը, 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ անդրադառնալով համաչափության սկզբունքին, արձանագրել է հետևյալը. «Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:»:

Որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման՝ պետության պարտականությունն է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների համալիր իրացումը: Իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ

նորմի ու սկզբունքի անտեսման: Ուստի, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք անհարկի չեն սահմանափակի անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

- ՀՀ Կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման գրասենյակ» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 1419-Ն որոշման համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 59-րդ և 60-րդ հոդվածներին խնդրահարույց է:

Համակարգող՝

X

Լյուդվիկ Դավթյան